

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Տիգրան Առաքելյան Վազգենի ԱԶ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊԶԲ-2021/16 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Գրասենյակային բազկաթոռը պետք է լինի շարժական, պտտվող, արմնկակալներով, թիկնակը և նստատեղը փափուկ: Բազկաթոռի ոտքերը պետք է լինեն ամուր երկաթյա, հոլովակավոր՝ հինգ անվակների վրա, որոնք միմյանց պետք է կապակցված լինեն հինգ թևանի երկաթյա խաչուկով, անիվները խաչուկին միացնող դետալները պետք է լինեն մետաղյա: Բազկաթոռի հիմնակմախքը՝ մեջքի հատվածը և նստատեղը, պետք է պատրաստված լինեն մեկ ամբողջական նրբատախտակից (փայտից) և պատված լինեն խիտ, փափուկ սպունգով՝ 6-8սմ հաստությամբ: Բազկաթոռը պետք է պաստառապատված լինի ամուր, սև գույնի միատոն կտորով: Բազկաթոռը պետք է լինի պտտվող, նստատեղը ունենա բարձրացնելու, իջեցնելու, ճոճման և ճոճը կանգնեցնելու ու նստատեղը առնվազն մեկ դիրքում ֆիքսելու հնարավորություն: Նստատեղի խորությունը պետք է լինի 45-52սմ, լայնությունը 47-55սմ: Բազկաթոռի արտաքին լայնքը (բռնակից բռնակ) պետք է լինի 55-60սմ: Նստատեղի զրոյական դիրքում՝ ամորտիզատորները լրիվ իջեցված վիճակում, հատակից մինչև նստատեղ բարձրությունը պետք է լինի 40-47սմ, ամորտիզատորները բարձրացված վիճակում՝ 48-55սմ, նստատեղից մինչև թիկնակի վերին հատված բարձրությունը պետք է լինի 62-70սմ ամորտիզատորները լրիվ իջեցված վիճակում հատակից մինչև թիկնակի վերին հատված բարձրությունը՝ պետք է լինի 105-115սմ: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ * Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը:</p>







## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Տիգրան Առաքելյան Վազգենի ԱԶ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊԶԲ-2021/16 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	